Հավելված N 245
Հաստատված է
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գլխավոր քարտուղարի
2019 թ. սեպտեմբերի 2-ի N 448 - Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիր՝ 18-34.10-Ղ3-1)

1.2. Ենթակա և հաշվետու է
Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու նախարարին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ
Վարչության պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են վարչության պետի տեղակալը և բաժինների պետերը:

1.4.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ Վարչության բաժինների պետերից մեկը:

1.5. Աշխատավայրը
Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ.Սարգսյան3, Կառավարական շենք N 2

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) ապահովում է մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների ու մշակութային արժեքների (այսուհետ՝ Ժառանգություն) ոլորտի հայեցակարգերի, ռազմավարության, Ժառանգությունը և ժողովրդական արհեստների կարգավորող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծերի մշակումը,

2) ապահովում է մշակութային Ժառանգության և ժողովրդական արհեստների ու մշակութային արժեքների ոլորտի պետական, նպատակային ու զարգացման կարճաժամկետ ծրագրերի կազմումը, առանձին միջոցառումներ և դրանց իրականացման ձևերն ու կարգերը և նպաստում դրանց իրականացմանը:

3) ապահովում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացը:

4) ապահովում է մշակութային Ժառանգության և ժողովրդական արհեստների ու մշակութային արժեքների բնագավառի պետական քաղաքականության վերլուծությունը, ուսումնասիրում զարգացման միտումները և օրինաչափությունները

5) ապահովում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հետազոտման, ուսումնասիրման, պահպանության, պաշտպանության, օգտագործման, հանրահռչակման պետական քաղաքականության սկզբունքների, ձևերի ու կարգերի

կիրարկումը.

6) ապահովում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի պետական քաղաքականության ձևավորումը.

7) ապահովում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքները.

8) ապահովում է համագործակցությունը ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան՝ օտարերկրյա պետությունների պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման բնագավառի լիազոր պետական մարմինների հետ.

9) ապահովում է աջակցություն ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան՝ օտարերկրյա պետությունների տարածքում գտնվող հայկական հուշարձանների հաշվառմանը ու հետազոտմանը

10) ապահովում է ուսումնական, գիտահետազոտական, զբոսաշրջության զարգացման նպատակներով հուշարձանների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը.

11) ապահովում է թանգարանային, գրադարանային հավաքածուների պետական հաշվառումը, անձնագրավորումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, համալրումը, ներկայացումը, օգտագործումը և հանրահռչակումը, դրանց ուսումնասիրությունը և վերլուծությունը, ինչպես նաև գրադարանային հավաքածուներից ֆիզիկապես մաշված գրականության դուրսգրումը.

12) ապահովում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, թանգարանային ու գրադարանային հավաքածուների, ոչ նյութական մշակութային ժառանգության օբյեկտների՝ հաշվառման, վավերագրման, պահպանման, պահպանության, վերականգնման, համալրման, ուսումնասիրման, օգտագործման և հանրահռչակման աշխատանքների իրականացումը և այդ աշխատանքների վերլուծությունը.

13) ապահովում է Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում գտնվող ազգային ոչ նյութական մշակութային արժեքների բացահայտման և այդ արժեքների հաշվառման ու հրապարակման աշխատանքների կատարումը.

14) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով ապահովում է ոչ նյութական մշակութային արժեքների վերականգնումը, այդ թվում նաև ժողովրդական արհեստների.

15) ապահովում է մշակութային, գիտական և կրթական հաստատությունների, գիտահետազոտական կենտրոնների, թանգարանների, գրադարանների, արխիվների, լաբորատորիաների, արհեստանոցների ստեղծմանն ու զարգացմանը աշխատանքները, ապահովում է աջակցություն գիտական, մշակութային կազմակերպություններին և արշավախմբերին ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների և ժողովրդական արհեստների ուսումնասիրման, հրատարակման և հանրահռչակման գործում.

16) ապահովում է ոչ նյութական մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների պահպանության և պաշտպանության միջոցառումների՝ գիտաժողովների, սեմինարների, համերգների, ցուցահանդեսների, ծիսակարգերի և հանդիսությունների, ժողովրդական ավանդական տոների, մարդու կյանքի շրջափուլերի հետ կապված

ժողովրդական սովորույթների, ազգային խաղերի կազմակերպումը, ինչպես նաև ժողովրդական ավանդական տոների անցկացման ձևերի ներդրումը.

17) ապահովում է մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների ոլորտի պետական պատվերի տեղաբաշխման, դրա կատարման ընթացքի հսկողության, արդյունքների ընդունման գործընթացները և ստեղծում տվյալների շտեմարան.

18) ապահովում է պետական սեփականություն համարվող մշակութային արժեքների, թանգարանային, գրադարանային հավաքածուների կառավարումը.

19) ապահովում է առաջարկություններ պետության առաջնահերթության նախապատվության իրավունքով քաղաքացիներից և իրավաբանական անձանցից Ժառանգության ոլորտի, նրանց պատկանող, առանձին առարկաների գնման վերաբերյալ.

20) ապահովում է մշակութային արժեքների հակահրդեհային ազդանշանային անվտանգության և տեղեկատվության արդիական համակարգերի ներդնումը՝ պետական թանգարաններում և գրադարաններում.

21) ապահովում է պետական թանգարաններում թանգարանային առարկաներին և թանգարանային հավաքածուներին հաղորդակցվելու պայմանակարգի (ռեժիմ) վերահսկման աշխատանքները.

22) ապահովում է գրադարանների գործունեության, այդ թվում՝ տեղեկատվական-գրադարանային ցանցերի ստեղծման և զարգացման աշխատանքների միջգերատեսչական համակարգումը.

23) ապահովում է նախարարության ենթակայությամբ գործող գրադարաններում գրքային հավաքածուներից օգտվելու կանոնակարգի մշակման աշխատանքները և առաջարկություններ է ներկայացնում Նախարարին գրադարանային հավաքածուների պահպանվածության ապահովման վերաբերյալ.

24) ապահովում է ոչ նյութական մշակութային ժառանգության օբյեկտների և ժողովրդական արհեստների հավաքագրման, ուսումնասիրման, տարածման և հանրահռչակման աշխատանքները.

25) ապահովում է գիտահետազոտական աշխատանքների իրականացումը Ժառանգության և ժողովրդական արհեստների բնագավառում.

26) ապահովում է նախարարության ենթակայության Ժառանգության ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը.

27) ապահովում է աջակցություն Ժառանգության բնագավառում նոր տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի ներդրմանը, ապահովում է Ժառանգության ոլորտի կազմակերպությունների տեխնիկական վերազինումը.

28) ապահովում է աջակցություն ցուցահանդեսների, ցուցահանդես-վաճառքների, աճուրդների, գիտաժողովների, համաժողովների, սեմինարների (այդ թվում՝ միջազգային) և այլ միջոցառումների կազմակերպմանը.

29) ապահովում է Ժառանգության և ժողովրդական արհեստների ոլորտի Նախարարության համագործակցությունը Հայաստանի Հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, գիտական ու այլ կազմակերպությունների, ստեղծագործական միությունների հետ, նպաստում շփումների ստեղծմանն ու զարգացմանը,

30) ապահովում է վարչական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) վարման համակարգը, վարում է Ժառանգության և ժողովրդական արհեստների ոլորտի վարչական վիճակագրությունը, ոչ ֆինանսական հաշվետվությունները, մշակութային կազմակերպությունների հաշվառումը և ստեղծում տվյալների շտեմարան.

31) ապահովում է մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների

բնագավառում վերապատրաստման ու վերաորակավորման ծրագրերի, մասնագիտական որակավորման չափանիշների մշակումը՝ միջազգային մասնագիտական չափորոշիչների և նորմերին համապատասխան,

32) ապահովում է տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմանն ուղղված դասընթացների կազմակերպումը.

33) ապահովում է մասնակցություն մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների բնագավառում մասնագետների պաշտոնական պարտականությունների որակավորման բնութագրեր կազմումը,

34) ապահովում է Ժառանգության և ժողովրդական արհեստների ոլորտի թվանշանացված շտեմարանների և ներքին կապուղու ծրագրերի ստեղծումը, աջակցում է պետական միասնական տեղեկատվական համակարգին,

35) ապահովում է Ոլորտում միջազգային փորձին ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԵՄ աշխատանքային ողեցույցներին, մեթոդական ցուցումներին և միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորություններին համապատասխան պետական մշակութային քաղաքականության, նպատակային ծրագրերի իրականացման, կազմակերպման աշխատանքների կազմակերպումը,

36) ապահովում է գրքի, տպագիր արտադրանքի և հրատարակչական գործի զարգացմանն աջակցող ծրագրերի մշակումը, նպաստում դրանց իրագործմանը և դիտանցման իրականացմանը.

37) ապահովում է մշակութային արժեքների արտահանման և ներմուծման հետ կապված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակումը՝

43) Ապահովում է մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ)՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան տալու գործընթացը.

38) ապահովում է տեղեկատվական աղբյուրների և նյութերի ուսումնասիրության միջոցով այլ պետություններում գտնվող ազգային մշակութային արժեքների հայտնաբերումը և հաշվառումը, դրանց հաշվառման մատյանի կազմումը ու այդ արժեքների մասին տվյալների շտեմարանի ստեղծումը.

39) ապահովում է Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքների ցանկի ստեղծման ու համալրման գործընթացը, արգելում այդ ցանկում ներառված արժեքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանումն ու ժամանակավոր արտահանումը.

40) ապահովում է մշակութային արժեքների տեղեկատվական շտեմարանի և դրա ու գողացված, կորած, հափշտակված մշակութային արժեքների շտեմարանների տվյալների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով նախատեսված կարգով ձեռնարկում է միջոցներ՝ մշակութային արժեքների ապօրինի արտահանումն ու ապօրինի ներմուծումը կանխարգելելու, դրանց նկատմամբ սեփականության իրավունքի ապօրինի փոխանցումը կանխելու, ինչպես նաև մշակութային արժեքների սեփականատերերի գրանցված իրավունքները պաշտպանելու գործընթացները.

41) Ապահովում է Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս տեղեկատվություն մշակութային արժեքների անհետացման, կորստի,

հափշտակության փաստերի մասին տեղեկատվության տարածման գործընթացը.

42) Ապահովում է մշակութային արժեքների պահպանական ցուցակում գրանցված կամ գրանցման ենթակա՝ ժամանակավոր արտահանվող մշակութային արժեքների հաշվառումը, ժամանակավոր արտահանումից վերադարձված այդ արժեքների իսկության (նույնականացումը) արձանագրումը, սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չվերադարձվելու դեպքում դրանց հետբերման համար միջոցների ձեռնարկման գործընթացը.

43) Ապահովում է փորձագիտական եզրակացության հիման վրա առաջարկությունների ներկայացումը արտահանման համար հայտագրված՝ մշակութային արժեքների պահպանական ցուցակում գրանցման չափորոշիչներին համապատասխանող, իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականությունը հանդիսացող մշակութային արժեքների՝ պետության կողմից գնման նախապատվության իրավունքի իրականացման վերաբերյալ, ինչպես նաև գործընթացի իրականացումը.

44) Ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակութային արժեքների պահպանական ցուցակում պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքների՝ կամավոր սկզբունքով գրանցման գործընթացը, այդ արժեքների ցուցակի կազմումը,

45) Ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակութային արժեքների արտահանման ու ժամանակավոր արտահանման հնարավորության կամ անհնարինության մասին որոշման ընդունումը, մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի՝ սահմանված նմուշի վկայագրի գործընթացը,

46) Ապահովում է կերպարվեստի ու դեկորատիվ-կիրառական արվեստի բնագավառի՝ վերջին 50 տարում մահացած այն հեղինակների ցանկի ստեղծման աշխատանքները, որոնց ստեղծագործությունները Հայաստանի Հանրապետությունից կարող են արտահանվել միայն մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագրի հիման վրա,

47) Ապահովում է արտահանման կամ ժամանակավոր արտահանման համար հայտագրված առանց սահմանափակումների արտահանման ենթակա մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների լուսանկարների շրջերեսին վավերացման և դրանց իսկության հաստատումը՝ հայտատուի ցանկությամբ,

48) Ապահովում է վերականգնման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածք մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելու մասին հայտերի ընդունումը, կազմակերպում դրանց իսկության, իսկ վերաարտահանելիս՝ ժամանակավոր ներմուծված մշակութային արժեքների վերականգնման արդյունքը լինելու (նույնականության) մասին տեղեկանքների տրամադրումը, այդ արժեքների հաշվառման, հայտերի ու տեղեկանքների տրամադրման գործընթացը.

49) Ապահովում է ժամանակավոր արտահանվող նվագարանի վկայականի պատրաստման գործընթացը.

50) Ապահովում է արտահանվող, ժամանակավոր արտահանվող, վերականգնման նպատակով ժամանակավոր ներմուծվող մշակութային արժեքների ու

առարկաների տեղեկատվական շտեմարանների համալրման ու դրանց օգտագործման, ուսումնասիրման ու վերլուծության գործընթացները.

51) Ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով առգրավված կամ բռնագրավված մշակութային արժեքները Հայաստանի Հանրապետության պետական պահոցների (թանգարաններ, արխիվներ, գրադարաններ և այլ մշակութային կազմակերպություններ) մշտական պահպանության կամ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համապատասխան ծառայությանը հանձնելու գործընթացները.

52) Ապահովում է նախարարության մշակութային արժեքների փորձաքննություն իրականացնող մասնագետների հավատարմագրման խորհրդի աշխատանքները, ինչպես նաև մշակութային արժեքների փորձաքննություն իրականացնող մասնագետ-հայտատուների հավատարմագրման գործընթացն ու հավատարմագրման վկայագրերի տրամադրման աշխատանքները.

53) Ապահովում է մշակութային արժեքների պահպանությունն ու պաշտպանությունն իրականացնող, ինչպես նաև արտահանումն ու ներմուծումը կարգավորող և վերահսկող պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ կապն ու համագործակցությունը.

54) Ապահովում է ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված գործընթացները՝ միասնական մաքսային տարածքով պայմանավորված իրավական ակտերի, համաձայնագրերի, «միասնական պատուհան» համակարգի ներդրման գործընթացների շրջանակներում փաստաթղթերի ուսումնասիրության, առաջարկների ներկայացման, միջգերատեսչական համակարգող աշխատանքային խմբերում ներգրավվածության, ԵԱՏՄ օրենսդրական դաշտի ներդաշնակեցման գործընթացների շրջանակներում իրականացվող աշխատանքները.

55) Ապահովում է «Հազվագյուտ աղեղնավոր նվագարանների պետական հավաքածուի» նվագարանների վարձակալության տրամադրման գործընթացը.

56) Ապահովում է նախարարության ենթակայությամբ գործող թանգարաններում
թանգարանային առարկաների պահպանվածության վիճակի և պահպանության պայմանների վերաբերյալ դիտանցումների գործընթացը.

Իրավունքները՝

- համապատասխան կազմակերպություններից պահանջելու ներկայացնել Ոլորտին առընչվող ընթացիկ կամ նախատեսվող միջոցառումների, ծրագրերի վերաբերյալ տեղեկանքներ, հիմնավորումներ, հաշվետվություններ և այլ նյութեր,
- համապատասխան կազմակերպություններից պահանջելու ներկայացնել Ոլորտի օրենսդրությամբ, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի որոշումներով, այլ իրավական ակտերով սահմանված գործընթացների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն,
- նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև շահագրգիռ այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հրավիրել խորհրդակցություններ, քննարկումներ վարչության առջև դրված գործառույթների և

խնդիրների իրականացման համար,

- համապատասխան շահագրգիռ մարմիններից ստանալ մասնագիտական կարծիքներ և ներկայացնել առաջարկություններ մշակութային ժառանգության ոլորտի ռազմավարությունների և հեռանկարային զարգացումների վերաբերյալ,
- նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև այլ գերատեսչություններից պահանջել և ստանալ հիմնավորումներ, պարզաբանումներ և տեղեկատվություն՝ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսային ծրագրի և ՀՀ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորվող ծրագրերի վերաբերյալ,
- ներգրավել կամ վարչության աշխատակիցներին ներգրավելու մասին առաջարկություններ ներկայացնել այլ կազմակերպությունների կողմից մշակված մշակութային ժառանգության ծրագրերի փորձաքննության աշխատանքներին,
- վերահսկել մշակութային ժառանգության ոլորտի պետական ռազմավարական ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները, ստանալ ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն շահագրգիռ և մասնակից կողմերից, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից,
- արտահանման կամ ժամանակավոր արտահանման համար հայտագրված առարկաների մշակութային արժեք կամ մշակութային նշանակության առարկա լինելու հանգամանքը ճշտելու համար հրավիրել և վարել նիստեր.
- ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված աշխատանքների համակարգման համար ծանոթանալ անհրաժեշտ իրավական ակտերին, համաձայնագրերին, ստանալ անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն, այդ թվում՝ ՀՀ մաքսային պետական մարմիններից և ծառայություններից, իրականացնել միջգերատեսչական քննարկումներ, խորհրդակցություններ, ներկայացնել առաջարկություններ ինչպես ներպետական, այնպես էլ միջպետական հարաբերություններում մշակութային արժեքների օրինական շրջանառությունն ապահովելու նպատակով.
- մշակութային արժեքների տեղեկատվական շտեմարանի համալրման աշխատանքների համակարգման գործընթացնում ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն գործընթացում ներգրավված կազմակերպություններից (թանգարաններ) շտեմարանի համալրված վիճակի, ցուցանիշների, համալրման քանակական տվյալների, ինչպես նաև գործընթացում առկա խնդիրների և դժվարությունների վերաբերյալ.
- մշակութային արժեքների արտահանման և ներմուծման հայտերի քննարկումների և նույնականացումների գործընթացների կազմակերպման ընթացքում ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն հայտերի փաթեթների, պահանջվող փաստաթղթերի ամբողջականության, արտահանվող մշակութային արժեքների հետ կապված պահանջվող տեղեկությունների և տեղեկատվության առնչությամբ,
- Նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ներկայացուցիչների, ինչպես նաև շահագրգիռ այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպել Վարչության առջև դրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներ:

Պարտականությունները՝

- ոլորտի պետական քաղաքականության վերլուծությունը, միտումների և օրինաչափությունների ուսումնասիրությունը,

- մշակութային ժառանգության կառավարման սկզբունքների, իրականացման ձևերի ու կարգերի վերաբերյալ հայեցակարգերի ներկայացումը,
- Ոլորտում նպատակային պետական ծրագրերի, առանձին միջոցառումների իրականանցումը, առաջարկների ներկայացումը դրանց իրականացման ձևերի ու կարգերի վերաբերյալ,
- ոլորտի մասով առաջարկությունների ներկայացումը՝ միջնաժամկետ և տարեկան բյուջետային ծախսային ծրագերի, նախարարության գործունեության տարեկան ծրագրի, պետական պատվերի ձևավորման վերաբերյալ,
- գործող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին Նախարարին և Գլխավոր քարտուղարին է առաջարկությունների ներկայացումը, իրավական ակտերի կիրարկումը,
- Ոլորտի հայեցակարգերի, զարգացման ռազմավարության, գերակա խնդիրների, գերակա միջոցառումների, Ոլորտը կարգավորող օրենսդրության, օրենքների կիրարկումն ու Ոլորտի բնականոն գործունեությունն ապահովող իրավական ակտերի, չափորոշիչների, մեթոդական ցուցումների, պարզաբանումների և այլ փաստաթղթերի նախագծերի փաթեթների լրակազմ լինելը,
- մշակութային Ժառանգությանը և ժողովրդական արհեստներին վերաբերող մեթոդական ցուցումների, պարզաբանումների, ուղեցույցների, արժեքների գրանցման, դասակարգման, ցուցակների կազմման, հաշվառման, պահպանության, պաշտպանության, օգտագործման, համալրման սկզբունքների, կանոնների, չափանիշների (նորմատիվներ) և չափորոշիչների ապահովումը,
- Նախարարին նոր պատմամշակութային արգելոց ստեղծելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,
- Ոլորտում գործող փաստաթղթերի ուսումնասիրությունը, մասնագիտական առաջարկներ ներկայացնելը՝ դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,
- Նախարարության կողմից համապատասխան մարմիններին և կազմակերպություններին ներկայացվող Ժառանգության վերաբերվող զեկուցումների, հաշվետվությունների, առաջարկությունների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակումը.
- Ժառանգության և ժողովրդական արհեստների ոլորտի՝ հատուկ նպատակներով ստեղծված, միջգերատեսչական, Նախարարին կից գործող և այլ խորհուրդների ու հանձնաժողովների աշխատանքը, առանձին հարցերի վերաբերյալ մասնագիտական եզրակացությունների նախապատրաստումը.
- Ոլորտում միջազգային փորձի, ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԵՄ Ոլորտին առնչվող աշխատանքային ուղեցույցների, մեթոդական ցուցումների և միջազգային կոնվենցիաների ուսումնասիրությունը և վերջիններիս տեղայնացումը և կիրարկումը:
- Ոլորտի առանձին հարցերի վերաբերյալ մասնագիտական ու փորձագիտական եզրակացությունների նախապատրաստումը.
- պետական պատվերի տեղաբաշխման, դրա կատարման ընթացքի հսկողության և արդյունքների ընդունման գործընթացները.
- նախագծերի մշակումը և առաջարկությունների, եզրակացությունների, պարզաբանումների ներկայացումը:
- մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի, նրանց տարեկան գործունեության գնահատման վերաբերյալ, ինչպես նաև պետության կողմից Ժառանգության ոլորտի գործիչների շրջանում մրցանակների, պարգևների բաշխման և աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը

նախարարին ՀՀ Կառավարության արտագնա նիստերի օրակարգում ընդգրկելու նպատակով,

- ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված օրենսդրության համապատասխանեցմանն ուղղված գործընթացների ապահովումը, համապատասխան իրավական ակտերի կազմումը և ներկայացումը իրավասու մարմիններին, «միասնական պատուհան» համակարգի ներդրմանն ուղղված գործընթացների շրջանակներում փաստաթղթերի ուսումնասիրությունը, առաջարկների ներկայացումը, ներգրավվածությունը միջգերատեսչական համակարգող աշխատանքային խմբերում,
- Մշակութային արժեքների տեղեկատվական շտեմարանի համալրման աշխատանքների համակարգման գործընթացում վերլուծել ստացված տեղեկատվությունը, համադրել, ծրագրել և նախանշել հետագա իրականացվող աշխատանքների կատարման արդյունավետ ուղիներ,
- մշակութային արժեքների պահպանությունն ու պաշտպանությունն իրականացնող, ինչպես նաև արտահանումն ու ներմուծումը կարգավորող և վերահսկող պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ կապն ու համագործակցությունը,
- Նախարարության «Հազվագյուտ աղեղնավոր նվագարանների պետական հավաքածուի» նվագարանների վարձակալության տրամադրման գործընթացը,
- Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստման գործընթացը.
- պետական պահոցներից ժամանակավորապես արտահանված մշակութային արժեքների նույնականացման և համապատասխան ակտի կազմման գործընթացը.
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի տեղեկությունների ստացումը.
- մշակութային աճուրդային տներում վաճառվող հայկական ծագում ունեցող արժեքների մոնիթորինգը.
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիների ու իրավաբանական անձանց գրությունների, դիմում-բողոքների վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների գործընթացը:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Ուղղություն	Հումանիտար գիտություններ և արվեստ	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ

Ոլորտ	արվեստ	Հումանիտար գիտություններ		Սոցիալական և վարքա բանական գիտություն ներ
Ենթաոլորտ	Միջոլոր տային մասնագիտու թյուններ	Պատմու թյուն և հնագիտություն	Միջոլորտային մասնագիտություններ	Մշակութա բանություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձ

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տեղեկատվության և հարակից մասնագիտությունների բնագավառում արխիվագետի կամ թանգարանագետի կամ գրադարանավարի կամ մատենագետի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4.Անհրաժեշտ կոմպետեցիաներ

Ընդհանրական կոմպետենցաները՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն:

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում:

4.Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ կամ մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորություններ

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ կամ մի քանի ոլորտների համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

4.4. Շփումներ և ներկայացուցչություն

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: